



ԺԷ ՏԱՐԻ, ԹԻՒ 12

1859

ԴԵԿԵՄԲԵՐ 1

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

Կոնվուկյուսի առածեներ : (Տես երես 322)

Կ'ուզե՞ս որ աղէկ մարդը գէշէն որոշես . ասիկայ շատ դժուար բան է : Այս կայն քու քովի մարդդ դիտէ . ինչ որ կ'ընէ , ու ինչ որ կը մտածէ աղէկ կշուէ , վասն զի չարերն ընդհանրապէս անիրաւ ու ամընալու գործքեր կ'ընեն , ու աղէկները՝ գովելի ու արդար գործքեր :

Ի՞նչ այսափս բաւական չէ : Իշելի խորունկը գնա՞ , ու անոր տեսութեանցը մէջ թափանցէ . նայէ իմացիր թէ ինչ է անոր դրած նպատակը : Ծակ որ սիրու ծուռ է ու դիտաւորութիւնները թիւր , թէպէտ բարի գործքեր ընէ՝ ոչ երբէք արդար մարդ է անիկայ :

Ծակ որ կը վախես որ խաբուիս , ասով ալ գոհ մի ըլլար : Օննէ թէ ու ընկը են իր ախորժած բաները և ինչ հակամիտութիւններ ունի աս մարդս որ արդար կ'երենայ : Ծակ որ անկեղծութեամբ գործքերը կ'ընէ , թէ որ

գիտմունքներն ուղիղ են , բայց միանգամայն նաև իբրև բռնադատեալ կը գործէ . թէ որ իր հաճոյքն ու իր հանգը առաջանալիւնը իր գործոց անարատութեանը վրայ միայն չդնէ , չկրնար ըստուիլ որ անոր արդարութիւնը կատարեալ է , և միշտ վախնալու է որ կրնայ կարձատե ըլլալ :

Ի՞նչ առանց զօրաւոր պատճառներու պէտք չէ այսպէս պրայտել մարդկանց սրտին խորը : Դուքու անձդ մանրազնին քննէ , և զուրիշը թեթև քննէ . ասով կրնաս այլոց ատելութենէն խալսիլ :

Ի՞նդադար միտքդ բեր ու մոածէ ժամանակով սորվածներդ , անոնցմէ նոր նոր հետեանքներ ու սկզբունքներ հանէ . ասանկով մեծ լուսաւորութիւն կը ստանաս , ու արժանի կ'ըլլաս զուրիշները կրթելու :

Իմաստունը անօթ մը չէ որ քանի մը քանի միայն գործածուի . շատ տեսակ յատկութիւններ ունենալով , ամենամեծ բաներու ալյարմար է :

Երբոր ուզէ ուրիշի սկզբունք տալ զայն իւր վարքովը կը հաստատէ . այսինքն իւր օրինակովը զուրիշը կը կրթէ : Այս կը գործէ , ետքը կը սորվեցընէ : Իմաստասէրը իրեն լուռթեամբը կը յանդիմանէ իր այն աշակերտն՝ որուն որ բնութիւնը սաստիկ յորդախոս ձարտասանութիւն մը շռայլեր է :

Ով որ միշտ կը գործէ ու բնաւ շմտածեր , վերջը վերջը բոլոր իր աշխատանքը կը կորսընցընէ : Ով որ միշտ կը մտածէ և բան մը ըններ , մոլորելու ենթակայ կ'ըլլայ : Հիրաւի կրթութեան միջոց է ուսանիլն ու հրահանգիլը . բայց թէ որ սորվածիդ վրայ չես մտածեր , թէ որ ստէպ խելքդ միտքդ անոր վրայ չըլլայ , միայն աղօտ հմտութիւն մը կը ստանաս , որ տգիտութեան պէս ամուլ է :

Ինիկայ որ անհոգութեամբ և կամ հպարտ յանձնապատանութեամբ մը ոչ զիբք կը կարդայ , ոչ վարպետի բան կը հարցընէ . որ՝ առանց կրթութեան ետևել ըլլալու , գոհ կ'ըլլայ իրաց վրայ դատարկ ու անպտուղ տեսութեամբ մը մտածելու , այսպիսին անսնց ստուերները միայն կ'ունենայ մոքին մէջ . միայն ունայն ու խաբէական գաղափարներ կը ստանայ , իւր սուտ գիտութեանը մէջ թաղուած կը մնայ , կամ մանաւանդ թէ մոլորութենէ մոլորութիւն կ'իյնայ :

Բան մը գիտես , բարձրաձայն հուզակէ որ գիտես զայն . կայ բան ալ որ չես գիտեր , անկեղծաբար խոստովանէ տրդգիտութիւնդ : Ուարդա չկրնար ամէն բան գիտնալ , բայց պէտք է որ իր պարտուցը վերաբերած բաները սորվի ու ձանչնայ . պէտք չէ որ ենթադրէ թէ գիտէ զայն որուն անգէտ է . ևս առաւել պէտք չէ որ պարծի ուրիներուն դիմացն իր մոլորութեանցը վրայ , զանոնք սուտ երեսոյթներով ընտիր երեցնէ ու ինքղինքը խաբէ : Ուամանակ

տուր քեզի , ամէն բանի վրայ խելք յոգնեցուր , և քեզմէ աւելի բանգետներուն հետ խորհրդակցէ :

Իմէն լած խօսակցութիւններուդ մէջ խոհեմաբար ընտրութիւն մը ըրէ . լուռ կեցիր ան բանին վրայ որ քեզի տարակուսական կ'երեւնայ , և նայէ որ նոյն իսկ ստոյգ կարծած բաներուդ վըրայ շրջահայեցութեամբ խօսիս . ասանկով քիչ կը սխալիս խօսակցութեդ մէջ :

Իւազմապիսի գործողութիւններու մէջ որ առջեղ կ'ելլեն , զգոյշ կեցիր զանոնք ընտրելու՝ որոնք վտանգաւոր են , և կամ կրնան ուրիշի վնասել : Այս աղէկ ուշադրութիւն ըրէ այն գործողութեանց մէջ ալ , որոնց ձեռք պիտի զարնես . ամենայն զգուշութեամբ կատարէ զանոնք . ասանկով քիչ անգամ զըղջալու առիթ կ'ունենաս կամ յանդըգնութեամբ գործողութեան մը ձեռք զարնելուդ , և կամ գէշ կերպով զայն կատարելուդ վրայ :

Ինտանեաց մէջ սէր ու միաբանութիւն պահել տալը , մեր հպատակացը մէջ առաքինութիւնը թագաւորել տալը , ասիկայ է բուն կառավարելն , և օգտակար ու ֆառաւոր վարչութիւն մը բանեցընելը : Ի՞նչ հարկ կայ . ուրեմն հասարակաց ատենակալութեան ետևեկ իյնալ : Որպէս զի ատենակալի պատուանունը սոսկ ունենանք :

Չեմ գիտեր ինչ բանի կը ծառայէ խօսքը չպահող մարդը որ խօսակցութեանը մէջ խաբէութիւն կը բանեցընէ և իր դաշնացը վրայ չկենար : Հասարակաց պաշտօն մը չկրնար անոր վըստահացուիլ , ու առանձնական գործողութեց մէջ պէտք է կասկածիլ անկէ :

